ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 21 >> 03 2013թ. N: 73-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 29-Ի N 139-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒՄ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի դրույթներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ենթակայության հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմնի ընտրության մրցութային հանձնաժողովի անդամության թեկնածուների ցանկում Սահակ Հակոբյանի, Հովհաննես Մամիկոնյանի և Ժաննա Պետոյանի փոխարեն ընդգրկել համապատասխանաբար Տիգրան Շահբազյանին, Լիպարիտ Մարտիրոսյանին և Սեդա Մինասյանին:

2. Այդ կապակցությամբ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2012 թվականի մայիսի 29-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ենթակայության հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմնի ընտրության մրցութային հանձնաժողովի անդամության թեկնածուների ցանկը հաստատելու մասին>> N 139-Ա որոշման հավելվածում <<Սահակ Հակոբյան>>, <<Հովհաննես Մամիկոնյան>>, <<Ժաննա Պետոյան>> բառերը փոխարինել համապատասխանաբար<<Տիգրան Շահբազյան>>, <<Լիպարիտ Մարտիրոսյան>>, <<Սեդա Մինասյան>> բառերով:

Ֆ.ՅՈԼԱԿՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝